

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

12646

ԱԿԱՑ. ԽՈՐՀԵՐԴԱՑԻՆ ՀԱՅՐԱՎԵՑՈՒԹՅԱՆ
ՊՐՈԼԻՏԵՐԱՑԻՆ ԽՈԼՈՅ ՖՈԿՄԱՆԻ, միացեց.

2611



308(47)
5 - 16

ԱՐԱ ՀԱՅԵՑԱՀԱ

Ա. Բ. Ա. Յ.
ԼԵՍԵԿԻ,
ԼԵՍԵԿԻ
ՀԱՆԱՊԱՐՀՈՎ



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ — Հ. 208.

1 DEC 2009
25 SEP 2006

308(47)

Ը-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՅ. ԽՈՐՀՐԴ. ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարիատ բուլոյ յիշկների, միացե՛ք.

ԱՐԱՄ ՀԱՂԳՅԱԼԴԻ

300


1535-ՀԿ



ԱՐԱՆՑ ԼԵՆԻՆԻ,

ԼԵՆԻՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

1003
19253



26/1

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 208.

ՅԵՐԵՎԱՆ

1925.

19 SEP 2013

12646

ԱՐԱՆՑ ԼԵՆԻՆԻ

Մի տարի յե արդեն, վոր Լենինը չկա։ Մի տարի առաջ մեռավ ընկեր Լենինը։ Բանվորներն ու գյուղացիները կորցրին իրենց ուսուցչն, զրկվեցին իրենց զեկավարից։ Ամբողջ աշխարհի աշխատավորները, ճնշված ազգերը, բոլոր շահագործվողները կորցրին իրենց առաջնորդին։ Սը զի մեջ մտավ աշխարհը, սպի մեջ մտան բոլոր յերկրների բանվորներն ու գյուղացիները։ Զկա այլևս հարուստների, կապիտալիստների, ճնշողների գեմ կովող ընկ. Լենինը։

Ուրախացան հարուստները, ուրախացան հաստիքորերը, ուրախացան հաստավիդ իմպերիալիստները, կարծեցին թե, վոր Լենինը մեռավ իրենց բանը հաջող կզնա։ Հենց խմացան, վոր Լենինի մահվանից հետո կմեռնի և խորհրդային իշխանությունը, և բանվոր գասակարգն ու գյուղացին։

Սխարվեցին հարուստները, շատ սխալվեցին ավագակները։ Մոռացան, վոր կա, ապրում ե Լենինի անհաղթ կուսակցությունը — Կոմունիստական Կուսակցությունը։

30 տարի Լենինի զեկավարությամբ աշխատել ե մեր Կոմունիստական կուսակցությունը, 30 տարի կովել ու կոփել ե բայց և կյան պողպատե կուսակցությունը։ Սկզբում մի փոքրիկ խմբակ

Տիրաժ 10,000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում։

հետզհետե մեծանալով, հիմա վեց հարյուր հազար անդամ ունի Լենինի գործը շարունակող մեր կուսակցությունը:

ԼԵՆԻՆԻ ԳԾԱԾ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

30 տարվա ընթացքում շատ բաներ են անցել մեր կուսակցության վիճով, յեղել են հաղթություններ, յեղել են պարտություններ, յեղել են սև որեր ել, ուրախ որեր ել: 30 տարի շարունակ լավ որերին ել, վատ որերին ել Լենինը ցույց ե տվել բանվոր դասակարգի խսկական ձանապարհը: Լենինը սովորեցրել է կուսակցության ամենակարճ ձանապարհը դեպի բանվորների և գյուղացիների հաղթանակը: Կոմունիստական կուսակցությունը լավ զիտե, թե ինչպես պետք ե կովի կապիտալիստների դեմ, թե ինչպես պետք ե կառուցի բանվորների և գյուղացիների նոր աշխարհը:

Լենինը մեռել ե, բայց ապրում ե նրա կուսակցությունը, վորը գնում ե Լենինի ձանապարհով: Լենինը մեռել ե, բայց չի մեռել Լենինի ուսմունքը—լենինիզմը:

Ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները, իրենց առաջնորդ ունենալով Լենինյան կոմունիստական կուսակցությունը կերթան Լենինի ցույց տված ուղիով ու անպայման կհաղթեն:

Մի տարի ե, վոր Լենինը չկա: Այս մի տար-

վա աշխատանքների ժամանակ խորհրդային իշխանությունը, բանվորները Լենինի ուղիղ ճանապարհից դուրս չեն յեկել—միշտ գնացել են եղանակարհով: Հենց դրա համար ել Խորհրդային Միության Ռուսաստանի, Վրաստանի, Ազգբեյշանի, Հայաստանի և մյուս խորհրդային յերկրների գործերը լավ են գնում, քանի գնում անտեսությունը բարձրանում ե, քանի գնում լուսավորությունը շատանում ու քանի գնում ավելի ու ավելի ուժեղ ենք դառնում մենք:

ԲԱՆՎՈՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Ուժեղանում ենք նրա համար, վոր Լենինի պատվերները չի մոռանում կոմունիստական կուսակցությունը: Լենինի պատվերներից ամենահիմնական, ամենաթանկագինը են ե, վոր բանվորի և գյուղայու կազը ամուր պետք ե պահել: Բանվորի և գյուղացու ձանապարհները տարբեր չեն, բանվորն ու գյուղացին միասին պետք ե կովեն հարուստների դեմ, հողատերերի դեմ, բանվորն ու գյուղացին իրար հետ գեշն պետք ե կապեն, վոր հեղափոխությունը հաղթի, միասին պետք ե կառուցեն իրենց լավ ապագան: Բանվորները, չքավոր և միջակ գյուղացիները իրար շատ լավ բարեկամ պետք ե լինեն, իրար ձեռք ձեռքի պետք ե տան, վոր միասին կարողանան աշխատել, միասին կարողանան իրենց լավ կյանքը ստեղծել: Լենինը

պատվիրել ե կոմունիստական կուսակցության, խորհրդային իշխանության՝ բանվրի և գյուղացու կապը պինդ պահել, ենակես անել, վոր բանվորների և գյուղացիների դաշը չխախտվի։ Ես մի տարվա ընթացքում թե կուսակցությունը, թե խորհրդային իշխանությունը շատ ու շատ բան ե արել այդ կապը ամրացնելու, դաշը պնդելու։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Թե բանվորի և թե գյուղացու համար ոզուտ ե, վոր շատ գործարաններ, ֆաբրիկաներ աշխատեն, շատ ճոթեղեն, գութան, մեխոննանք, թերկաթը, նավթը, քարածուխը շատ լինի։ Յարական կառավարության հայտարարած պատերազմի պատճառով մեր յերկրի շատ գործարանները փակվեցին, քայլայվեցին, քանդվեցին—յերկրը շատ աղքատացավ։ Գյուղացու գութանը կոռրվեց, արորը ժանգուեց, մութ տեղը սկսեց ապրել։ Լենինի պատգամն եր բարձրացնել արդյունաբերությունը, աշխատեցնել գործարանները ու կուսակցությունը, բանվոր գասակարգը մեծ դժվարություններով, հազար ու մի տանջանքներով սկսեց վերականգնել գործարանները։ Սկսեցին աշխատել նավթի հորերը, սկսեցին աշխատել շաքարի գործարանները, սկսեցին աշխատել չիթ-կառըեղեն, գութան-յերկաթեղեն պատրաստող գործարանները։ Ու բանի դնում ենքան լավ ելին աշխատում

մեր գործարանները։ Եսպես՝ չթի-կտորեղենի գործարանները 1923 թվին հինգ հարյուր ութսուն միլիոն մետր կտոր եցին պատրաստել, 24 թվին ութ հարյուր յերեսուն հինգ միլիոն մետր, իսկ 25 թվին վորոշված ե պատրաստել հազար յերեք հարյուր միլիոն մետր (մետրը $22\frac{1}{2}$ վերշովէ)։ Մրտ նման ել մնացած գործարանները։ Հայատանում ել առաջ չթի գործարան չի յեղել, հիմա լենինականում շինվում ե մի գործարան, վորտեղ շատ բանվոր կրանի և մի քանի միլիոն արշին չիթ կտա մեղ։ Հեշտ չի գործարան բանեցնելը, հարկավոր ե շատ աշխատանք, հարկավոր ե փող։ Բայց չնայած դրան բանվորները ամեն տանջանք տանում են, վոր իր բարեկամ գյուղացին և գութան, և շաքար, և կտորեղեն ունենա։

ԳՆԵՐԻ ԻԶԵՑՈՒՄԸ

Բավական չե, վոր գործարանները շատ չիթ պատրաստեն, հարկավոր ե, վոր չիթը, շաքարը եժան լինի, նավթը եժան լինի, վոր գյուղացին կարողանա առնել, վոր գյուղացին հեշտությամբ կարողանա իր պահանջները հողալ։ Մի տարի սրանից առաջ քաղաքի ամբանքները շատ թանգ ելին, գյուղացին չեր կարողանում առնել։ Այդ բանը տեսավ լենինի կուսակցությունը, խորհրդային իշխանությունը։ Այդ բանը տեսավ բանվոր գասակարգը։ Ու սկսեցին գները իշեցնել, իջե-

ցրին քաղաքի ամեն տեսակի ապրանքների գները և հիմա ամեն մի գյուղացի լավ գիտի, վոր անցած տարվանից մինչև հիմա շատ ե իջել ապրանքի գինը: Ճոթը, վոր առաջ գյուղացին չեր մոտենում, հիմա հենց վոր կոռպերատիվը գյուղ ե տանում, մի յերկու որում խլխում են, առնում են: Ճիշտ ե դեռ մեր նպատակին չենք հասել, դեռ շատ չենք եժանացրել, բայց թե կուսակցությունը, թե իշխանությունը ամեն կերպ աշխատում են ապրանքները եժանացնել և քանի գնա գները կի՞նեն: Զի՞ արշինը, վոր առաջ մի մանեթով ել չեր ճարվում, հիմա 35—40 կոռպեկի ե իջել. եսպես ել մնացած ապրանքները:

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Բանվորներն ել գործարաններում ամեն ինչ անում են, վոր ապրանքների գները իջնեն, վոր ապրանքները եժանանան: Հիմա բանվորները աշխատույ են աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել, առաջ յեթե որական մի բանվոր 4 մանեթի ապրանք եր տալիս գործարանին, հիմա աշխատում ե տալ հինգ մանեթի, վեց մանեթի ապրանք, վոր ապրանքի գինը իջնի: Յեկ քանի աշխատանքի արտադրողականությունը բարձրանա, ենքան ապրանքը կեժանանա: Բանվորը իր բարեկամ գյուղացու համար ե չարչարփում գործարա-

նում, նրան եժան ապրանք տալու համար ե աշխատում արտադրողականությունը բարձրանցել: Լենինի պատվերը թե՝ եժան ապրանք պետք ե տալ գյուղին, այս մի տարվա ընթացքում բանվոր գառակարգը կատարել ե, ինչքան կարելի եր կատարել:

ԳՅՈՒՂԱՑՈՒՄ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Գյուղացիների համար քաղաքի ապրանքների գների իջեցման հետ միասին խորհրդային իշխանությունը աշխատել ե բարձրացնել գյուղի մթերքների գները: Հացի, մսի, պանրի և այլի պները: Անցյալ տարի Ռուսաստանում կարելի եր 50 կոտեկով մի փութ ցորեն առնել, եդակես չեր կարելի շարունակել, և խորհրդային իշխանությունը սկսեց բարձրացնել հացի գները: Հայաստանի գյուղում ել մսի, պանրի գինը սկսեցին բարձրացնել: Բայց եստեղ պետք ե ասել, վոր այնքան ել չի կարելի այդ գները բարձրացնել վորովհետեւ վասա կտա թե բանվորներին, թե գյուղացիներին: Յեկ սրա համար ել խորհրդային իշխանությունը այնքան ե բարձրացնում այդ գըները, վոր վասա չտա ամբողջ տշխատավորության շահերին:

Ես հարցում ել կուսակցությունը դնաց Լենինի ցույց տված ճանապարհով:

ՎԵՐՋ ՄԻԼԻՈՆԱՆՑՑԵՐԻՆ

Գյուղացիները հիշում են դեռ սրանից մի տարի առաջ թե ինչքան ելին կորցնում յեղած

միլիոնանոցներից։ Մի գաստա վոր ելիք գնում գրպանդ ու մինչև վոր հասնում ելիքը շուկա մի քանի բան առնելու, գրպանումդ փողի զինը ընկնում եր, եղ թղթե փողերը ահագին վսաս ելին տալիս զյուղացիներին։ Ես մի տարվա ընթացքում վերջ տվեց խորհրդային իշխանությունը թղթե փողին ու գյուղացիները շատ ոգուտ ստացան գրանից։ Մի ամրում գյուղացին եղ թղթե փողերից կորցնում եր հարյուր հիսուն միլիոն մանեթ գուսկով։ Հիմա եղան չի, պղնձե փող ել կա, արծաթի ել և եսորվա մի մանեթը մի ամսից հետո ել մի մանեթ ե։ Հեշտ չեր թղթե փողին վերջ տալը, շատ և շատ զըժվար եր, ենալիսի հարուստ յերկրներ ինչպես Ֆըրանսիան ե, Գերմանիան ե, նրանք ել չեն կարողանում, բայց մեր խորհրդային իշխանությունը զյուղացիների ոգուտն ու աշխատավորների ոգուտն ի նկատի ունենալով մացրեց ամուր փողը։

ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ՊԵՏՔ Ե ՈԳՆԵԼ

Սրանցով չի բավականանում լենինի կոմկուսակցությունը։ Նա գիտի, վոր գյուղում հարկավոր ե ոգնել չքափոր և միջակ գյուղացիներին, վորպեսզի նրանք իրենց սնտեսությունը բարձրացնեն։ Հիմա գյուղացին են չի ինչ վոր նիկալայի կառավարության, կամ գաշնակների ժամանակը հիմա զյուղացին ուղում ե լուսավորվել, ուղում ե իմանալ, թե աշխարհում ինչ

ե կատարվում, ուղում ե իր հողը լավ մշակել շարքացանով մշակել սերմը լավացնել, մաքրել ուղում ե հետզհետե թողնել իր հին պապենական սովորությունները ու մարդավայել ապրել։ Խորհրդային իշխանությունն ել ամեն կերպ ընդառաջ ե գնում գյուղացիների ցանկության, բաց ե անում նոր գոլրոցներ, խրճիթ-ընթերցարաններ, անգրագիտությունը վերացնող կայաններ, գյուղում կա պատի լրագիր, ստանում են գյուղացիները լրագրներ, սովորեցնում ե գյուղացիներին հողի մշակելու լավ ձևերը, սովորեցնում ե գյուղացիներին անասունների ցեղի ազնվացնելու, շատ կաթ ու պանիր ստանալու ձևերը։ Ճիշտ ե, դեռ շատ քիչ բան ե արված այս մի տարում, բայց արված ե, հետագայում ավելի շատ կարվի։ Խորհրդային իշխանությունը բաց ե արել գյուղատնտեսական բանկը, վորը վարկային ընկերությունների միջոցով չքավոր և միջակ գյուղացիներին վարկ ե տալիս, պարտք ե տալիս, վոր նրանք կարողանան իրենց անտեսությունը լավացնել։ Սերմացու ե տալիս պետությունը գյուղացիության։ Ճիշտ ե դեռ ևեր բանկը քիչ փող ու սիր, բայց ապեն տարի ինչքան վոր խորհրդային իշխանությունը հարստանա, ենքան ել այդ վարելիք, պարտքը շատ կտա գյուղացիներին։ Այսպիսով լենինի պատգամը—թե ոգնեք չքավոր և միջակ գյուղացիներին ես մի տարվա ընթացքում կուսակցությունը և խորհրդային

Իշխանությունը մեծ չափերով կատարել են:

Քաղաքի բանվորներն ել զանազան գյուղերի շեֆությունն են վերցրել և ինչքան վոր կարողանում են ոգնում են գյուղին, ինչքան կարողանում են պյուղը կույլտուրապես բարձրացնում են:

ԿՈՄՍՈՄՈԼԸ ՅԵՎ ՊԱՏԿՈՄԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Գյուղը բարձրացնելու համար կուսակցությունը կազմակերպում է գյուղի յերիտասարդներին կոմսոմոլի և գյուղի փոքրիկներին պատկոմների շուրջը, գյուղի յերիտասարդությունը լավ պետք ե իմանա Լենինի պատգամները և աշխատի բարձրացնել գյուղի թե տնտեսական և թե կույլտուրական դրությունը: 13 հազար կոմսոմոլին և 13 հազար պատկոմ ունենք Հայաստանում յեթե սրանք լավ աշխատեն ահագին և շատ մեծ ոգուտ կտան գյուղին:

ԳՈՒՂԽՈՐԾՈՒՐԴԸ

Շատ մեծ աշխատանք ե կատարել գյուղում գյուղի խորհուրդը, նա և մտածել դպրոցի մասին, խրճիթ ընթերցարաների մասին, նա և մտածել ճանապարհների, առուների մասին, բայց Լենինի բոլոր ասածները չի կատարել խորհուրդը, Ամենից առաջ ամբողջ խորհուրդ չի աշխատել, աշխատել ե միայն նախագան, շատ նախագաններ կոպիտ են յեղել, հարբեցող, կաշառակեր: Մեր գյուղում աշխատող ընկերները սովորել են հրա-

մայել գյուղացիներին, խորհուրդը իր ընտրողներին հաշիվ չեր տալիս և ելի շատ ու շատ թերություններ ունի խորհուրդը: Հիմա պետք ե աշխատել, այդ պակասություններին վերջ տալ, պետք ե աշխատել, վոր թե խորհուրդը և թե խորհրդի բոլոր սեկցիաները աշխատեն, բոլոր գյուղացիները սովորեն կառավարելը: Գյուղի աշխատողները պետք ե լինեն գյուղացու ընկերը և վոչ թե հրամայողը: Լենինի պատվերը — «Հնամարձակվեք հրամայել գյուղացիներին» պետք ե ամեն աշխատող անց կացնի կյանքում: Այս մի տարվա ընթացքում շատ աշխատանք ե տարգել խորհուրդները լավացնելու համար, սրանից հետո ել շատ պետք ե աշխատել վոր խորհրդային ապարատը լավ ծառայի գյուղացիության համար: Ես ե ասել Լենինը, ես ե ասում հիմա Լենինի կոմունիստական կուսակցությունը:

ՏՈՒՐԲԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Խորհուրդները մի սխալ բան ել են արել նրանք շատ տեղական տուրքեր են մտցրել գյուղում: Ել ինչի համար ասես գյուղացուց տուրք են վերցնում, նախագահի հախ ե, քարտուղարի ոռնիկ, միլիցիոների ոռնիկի, ել խրճիթ-ընթերցարանի, ել միլրաբի, ել դպրոցի, ել հանգապահի, ել շատ բաների համար: Եդ հարկերն ել, մեկ շնչի յեն բաժանում, մեկ հողի, մեկ կատեղորիաների: Եսպիսով շատ եյին նե-

դացնում գյուղացիներին: Խորհրդային իշխանությունը վորոշել է այդ հարցը կանոնափորել: առանց գյուղացիների համաձայնության վոչ մի անդական տուրք թույլ չտալ հավաքելու խորհուրդներին:

Գյուղացիները գանգատվում են և միասնարկեց, թե շատ ե: Յեթե հիմիկա մեր միասնարկը համեմատելու լինենք Նիկարայի զրած հարկերի հետ կտեսնենք, վոր առաջ գյուղացիները մի 2—3 անգամ ավելի հարկ եյին տալիս քան թե հիմա: Բայց հիմա մենք հավաքում ենք միասնարկը բաց, առանց թաղցնելու. իսկ Նիկարայի կառավարությունը, բացի այն, վոր հավաքում եր բաց հարկեր, կամ ինչպես առում են ուղղակի հարկեր, հավաքում եր զրանից ավել անուղղակի հարկեր: Առաջ Նիկարայի կառավարությունը վերցնում եր գյուղացիներից հազար հարյուր միլիոն մանեթ, իսկ խորհրդային իշխանությունը վերցնում է 500 միլիոն մանեթ: Խորհրդային իշխանությունը այդ հարկը վերցնում է ավելի ունիորներից, չքափրներին հարկից բոլորին աղատում է, իսկ միջակներից վերցնում է թիւ: Յեվ քանի զնա, ենքան ավելի արդար կլինի այդ հարկը բաժանված: Առանց հարկի պետությունը ապրել չի կարող, հարկը զեռ վերացնել չենք կարող: Բայց հարկը ենպես անել, վոր հարուստները շատ տան, իսկ միջակները քիչ—այդ խորհրդային իշխանությունը անում է, արել ե այս տարի և կանի մյուս տարի:

Այստեղ ել մեր կուսակցությունը զնացել ե Հենինի ճանապարհով, կյանքում անց ե կացրել Հենինի պատգամները:

ԿՈՌԵՐԱՑԻԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Եատ մեծ վնաս եյին տալիս, հիմա ել տալիս են գյուղացիներին վաճառականները, չարչիները, զյուղում խաղող, բամբակ, գինի հավաքողները: Նրանք քաղաքից ապրանքները եժան առնում են և թանգ ծախում գյուղացիներին, նրանք գյուղացիների մթերքները եժան հավաքում են և բանվորներին թանգ ծախում: Վորպեսզի այդպես չվիճի, վորպեսզի գյուղացիները չվիասվեն, բանվորները գյուղացիներին առում են՝ «ընկեր-գյուղացիներ, կազմակերպեցեք կոռպերատիվներ, արտելներ վոր վաճառականին, չարշում գուրս քշենք, վոր ոգուտը մնա մեզ: Քաղաքի ապրանքները գուրք եժան տարեք գյուղը և գյուղի մթերքները համապատասխան գլուխով ծախեցեք քաղաքին» այս մի տարվա ընթացքում շատ բան և արված կոռպերատիվներ կազմակերպելու համար:

Հայատանում ունինք ՇՇ կոռպերատիվ միություն, 28 հազար անդամով, ունինք այլեզրոքներ, ծխախոտագործներ, կաթնատնուեսական և ուրիշ ընկերություններ մոտ 10 հազար անդամով:

Բայց այդ քիչ ե: պետք ե՝ ենպես անել, վոր գյուղի մեծամասությունը՝ բոլոր չքափրները, բոլոր միջակները միանք ընկերությունների ան-

դամներ, այդ ճանապարհով կարելի յե լավացնել տնտեսությունը այդ ճանապարհով կարելի ե բարձրացնել տնտեսությունը, վորքան շատ կոռպերացման յենթարկվի գյուղացիությունը, ենքան շուտ կհասնի նա լուսավոր փայլուն ապագային՝ կոմունիզմին։ Ենինի այս ասածն ել ե բանվոր դասակարգը, Կոմկուսկցությունը իրագործում կրանքում։

ԱՌԱՑ ԼԵՆԻՆԻ, ԼԵՆԻՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Ճիշտ է Ենինը չկա, բայց ամեն գործ ել, վոր արել ե ես մի տարվա ընթացքում կոմկուսակցությունը, խորհրդային իշխանությունը արել ե Ենինի ասածների պես։ Դեռ յես շատ ու շատ լավ գործերի մասին չըպատճեցի—այդ բոլոր լավ գործերը ամրացնում են բանվորների և գյուղացիների կապը, ամրացնում են խորհրդային իշխանությունը, բարձրացնում են մեր տնտեսությունը։ Այդ բոլոր գործերն ել արված ե Ենինի պատգամների համաձայն—մեր կուսակցությունը գնացել ե Ենինի ճանապարհով։

Սրանից հետո ել խորհրդային իշխանությունը կերթա այդ ճանապարհով, դրա համար ել վոչ վոք չի կատածում, վոր բանվորներն ու գյուղացիները կհաղթեն։

Կեցցե Ենինի գծած ԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Կեցցե լինինիզմի 7/11. 1922
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Ազգային գրադարան



NL0195854

ԳԻՒԾ 8 ԿՈՊ.